

## ԷՎԹԱՆԱԶԻԱՆ ՈՐՊԵՍ ՍՈՅԻԱԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

**Լիլիթ Պողոսյան**

Տուժողի խնդրանքով սպանությունն արտոնյալ հանցակազմերով սպանությունների տեսակներից է, որը մի շարք երկրներում կոչվում է տուժողի համաձայնությունամբ կամ կարեկցանքի շարժառիթով սպանություն: Չնայած հասկացությունների տարատեսակությանը՝ բոլոր դեպքերում խոսքը միևնույն երևույթի՝ էվթանազիայի մասին է: «Էվթանազիա» եզրույթը, որ ձևակերպվել է որպես թեթև մահ, առաջին անգամ առաջարկել է անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը (1561-1626) իր «Նոր օրգանոն» հայտնի աշխատությունում: Բեկոնը գտնում էր, որ բժշկի պարտքն է ոչ միայն վերականգնել հիվանդի առողջությունը, այլև ապահովել անբուժելի հիվանդի հանգիստ, առանց տառապանքների մահը<sup>1</sup>: Էվթանազիան նոր ժամանակների երևույթ չէ: Անհույս հիվանդների կամ ծանր վիրավորների կյանքին վերջ դնելը բավականին տարածված երևույթ է եղել չին աշխարհում, մասնավորապես չին չունաստանում: Այդ է վկայում այն հանգամանքը, որ Պլատոնն իր «Հանրապետություն» հռչակավոր աշխատության մեջ, կանխորոշելով ցանկալի պետական կառուցվածքի հիմնական գծերը, այն կարծիքն է հայտնել, որ բժիշկները չպետք է խնամեն այն մարդուն, որն այլևս ի վիճակի չէ ապրելու: Պետք է թույլ տալ, որ նա մեռնի, և նման վերաբերմունքը, ըստ Պլատոնի, նպաստավոր է և՛ այդ մարդու, և՛ պետության համար: Այլ կերպ ասած Պլատոնը պասիվ էվթանազիայի կողմնակից էր: Մինչդեռ այնպիսի մտածողներ, ինչպիսիք էին Թոմաս Մորն ու Ֆրենսիս Բեկոնը, ակտիվ էվթանազիայի կողմնակիցներ էին, քանի որ, նրանց կարծիքով, մահամերձ հիվանդներին բժիշկները պետք է օգնեն, որպեսզի նրանք ավելի դյուրին ու խաղաղ մահանան<sup>2</sup>:

Էվթանազիա երևույթի ժամանակակից ձևակերպումը տրվել է 1980 թ. իբրև «գլխարտությունից մղված սպանություն»: Բժշկական գրականության մեջ էվթանազիա ասելով հասկանում են անբուժելի հիվանդի մահը դիտավորյալ արագացնելը՝ նրա տառապանքները դադարեցնելու նպատակով, թեթև, անցավ մահ, տուժողի խնդրանքի բավարարում՝ նրա վախճանն արագացնելու

<sup>1</sup> Տե՛ս Бэкон Ф., Соч. в 2 т., т. 2, I, 1978, էջ 269:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Նալչաջյան, Մահվան հոգեբանություն կամ ինչպես է հոգին հեռանում մարմնից, Եր., 1992, էջ 24:

համար որոշակի գործողություններ կատարելով կամ անգործություններ, այսինքն՝ կենսաապահովման սարքերի անջատմամբ<sup>1</sup>:

Ըստ հիվանդին մահ պատճառելու եղանակի՝ տարբերում են էվթանազիայի երկու տեսակ՝ ակտիվ և պասիվ: Ակտիվ էվթանազիայի դեպքում անբուժելի հիվանդին իր խնդրանքով կյանքից զրկում են դիտավորյալ, արագ և անցավ: Պասիվ «բացասական» էվթանազիայի դեպքում ձեռնապահ են մնում այնպիսի գործողությունների կատարումից, որոնք անհրաժեշտ են հիվանդի կյանքի տևողությունը երկարացնելու համար<sup>2</sup>:

Մահվան շեմին բոլորը չէ, որ կամքի ուժ են դրսևորում և արժանապատիվ կեցվածք ընդունում: Հաճախ տառապանքները մարդու մեջ խիստ վատ հատկանիշներ են արթնացնում: Անբուժելի հիվանդը կորցնում է իր մարդկային դեմքը, դառնում եսասեր, նյարդային, կասկածամիտ: Դեռևս 20-րդ դարի սկզբին գերմանացի հոգեբույժ Գոհեն և բժիշկ Բինբինգը փորձեցին հիմնավորել ազգի և մարդկության համար «ոչ լիարժեք անձանց» ոչնչացման անհարժեշտությունը: Այդ մարդկանց ցուցակում առաջին հերթին հոգեկան և ծանր խրոնիկական հիվանդություններ ունեցողներն էին: Դրանից 30 տարի անց ֆաշիստական պետությունն իրականացրեց այդ ծրագիրը: Պաշտոնական տվյալներով ծրագրի իրականացման առաջին հատվածում 1939 -41 թթ., ոչնչացվեց մոտ 90 000 մարդ: Տարբեր մասնագետների ենթադրությամբ՝ 1945 թ., Էվթանազիայի ծրագրի զոհերի թիվը Գերմանիայում կազմում էր 120 000 - 250 000 մարդ: Պատերազմից հետո որոշ բժիշկ էվթանազիստներ ինքնասպան եղան, մյուսները դատվեցին Նյուրնբերգյան դատարանի կողմից:

Այսպես, Գոհենի և Բինբինգի գլխարտությունից մղված էվթանազիայի գաղափարախոսությունը ֆաշիստական Գերմանիայում շատ արագ անցավ գաղափարական նկատառումներից բխող էվթանազիայի, այն է՝ «ոչ լիարժեք» ժողովուրդների ոչնչացմանը:

1987 թ. 39-րդ բժշկական վեհաժողովում ընդունվեց, Էվթանազիայի մասին հռչակագիրը, որը բացառում էր դրա կիրառումը:

Մեծ Բրիտանիայում էվթանազիան օրինականացնելու համար շարժումը սկսվել է 1935 թ., 1938-ին նմանատիպ հասարակական կազմակերպություն է ստեղծվում ԱՄՆ-ում, 1941-ին Շվեյցարիան դարձավ «գլխարտությունից մղված սպանությունը» օրինականացրած առաջին երկիրը: Հենց սա էլ նպաստեց «մահացու զբոսաշրջության» զարգացմանը, մի քանի տասնամյակ շարունակ

<sup>1</sup> Տե՛ս «Юридическая энциклопедия», М., 2006, էջ 938:

<sup>2</sup> Տե՛ս Капинус О. С., Эвтаназия в свете права на жизнь, М., 2006, էջ 64, 70:

Շվեյցարիան դեպի իրեն էր ձգում այն անբուժելի հիվանդ եվրոպացիներին, ովքեր ցանկանում էին, որ իրենց նկատմամբ կիրառվի էվթանազիա: 1967 թ. Կալիֆորնիայի Գերագույն դատարանը որոշում ընդունեց, որը հիվանդներին կյանքն ապահովող բուժումից հրաժարվելու իրավունք տրվեց: Այսպիսով ԱՄՆ-ում օրենքով թույլատրվեց միայն պասիվ էվթանազիան, իսկ ակտիվ ձևն արգելվեց բոլոր նահանգներում: 1990 թ. լայն արձագանք ունեցավ Ջեկ Գևորգյանի գործը: Ծագումով հայ, ամերիկացի հայտնի բժիշկ Ջեկ Գևորգյանն առաջինն էր աշխարհում, ով հրապարակայնորեն խոստովանեց, որ ինքն օգնել է կյանքից հեռանալու բազմաթիվ հիվանդներին<sup>1</sup>: Ի դեպ՝ բժշկությունն ապամուծյան մեջ ընդունված է ամենահրեշավոր մարդասպան համարել բրիտանացի բժիշկ Հարոլդ Շիպմենին, որը «գլխասիրաբար» սպանել է 265 մարդու: Նա հաճախորդներին ստիպում էր իրենց կտակը փոխել իր օգտին: «Ջարգացած» երկրներից աշխարհում առաջինը Հոլանդիան օրինականացրեց էվթանազիան: 2000 թ. այստեղ պաշտոնապես գրանցվել է էվթանազիայի 2123 դեպք: Այս երկրում այն պաշտոնապես կիրառվում է բժիշկների կողմից, և դա քրեորեն չի հետապնդվում: Մինչդեռ Շվեդիայի, Իտալիայի, Անգլիայի հասարակությունը կտրուկ դեմ է այս երևույթին: Ավստրալիայում, որտեղ էվթանազիան արգելվում է օրենքով «գլխասրտությունից մղված սպանություն» կողմնակիցներն սկսել են տարածել ինքնասպանության համար հավաքածուներ: Հավաքածուն իր մեջ ընդգրկում է խեղդվելու համար նախատեսված պոլիէթիլային փաթեթ և քնաբեր: Մահը վրա է հասնում թթվածնային քաղցի արդյունքում:

<sup>1</sup> 1990 թ. բժիշկ Ջեկ Գևորգյանի անունը հայտնի դարձավ աշխարհին: Իհարկե, ԱՄՆ բացահայտեց ոչ թե Գևորգյան-պոլիգլոտին (նա տիրապետում էր 15 լեզուների, այդ թվում՝ հայերենի, ռուսերենի և ճապոներենի), նկարչին կամ տաղանդավոր կոմպոզիտորին, այլ մի բժշկի, ով հայտնագործել էր «ինքնասպանության մեքենան», ինքը՝ Գևորգյանը այն անվանել էր «Գթություն մեքենա «Mercitron»»: Մեքենան իրենից ներկայացնում է 3 կաթոցիկներով շտատիվ: Կաթոցիկներից մեկը պարունակում է ուժեղ քնաբեր, մյուսը՝ միայն Գևորգյանին հայտնի մի հեղուկ, որը կաթվածահար է անում մկանները և դադարեցնում շնչառությունը, իսկ երրորդը՝ կալիումի քլորիդ, որը դադարեցնում է սրտի աշխատանքը: Այս սարքը, որ գործի էր դնում ինքը՝ հիվանդը, Գևորգյանը հարմարեցրել էր իր՝ 1968թ.-ի Volkswagen-ի մեջ: Հայտնի է, որ Գևորգյանն ապրել է համեստ՝ ամսական 537 դոլար թոշակով և երբևէ գումար չի պահանջել իրեն դիմողներից, չնայած նրա հարազատները, ասում են, հսկայական գումարներ էին փոխանցում բժշկի հաշվին, որոնք նա իբրև թե մտադիր էր օգտագործել, մահվան հիվանդանոցներ բացելու իր ծրագրի իրականացման համար: 1998-ի նոյեմբերին Գևորգյանը CBS հեռուստաալիքով հեռարձակեց իր հիվանդներից մեկի «ինքնասպանության» տեսագրությունը: Այս անգամ արդեն նրա դեմ քրեական գործ հարուցվեց, քանի որ նա ինքն էր ներարկում կատարել: 1999-ի մարտին դատապաշտպանների ծառայությունից հրաժարված 70-ամյա Գևորգյանը մեղավոր ճանաչվեց 2-րդ աստիճանի սպանության համար (առանց ծանրացուցիչ հանգամանքների սպանություն) և դատապարտվեց 10-25 տարվա ազատազրկման: Դատավորը, ընդ որում, ասաց մի խոսք, որին նրա հակառակորդներն ԱՄՆ-ում սպասում էին 10 տարի, այն է՝ «Դուք որոշել էիք փորձել՝ արդյոք արդարադատությունը կկարողանա կանգնեցնել ձեզ, թե՞ ոչ: Հիմա կարող եք համարել, որ կարողացավ...»: 2007-ին նրան տրվեց համաներում և ազատ արձակվեց:

Շվեյցարիայում գործող ազատական օրենքների շնորհիվ մեծ ճանաչում է ձեռք բերել Յյուրիխում գործող «Dignitas» ընկերությունը, որը էվթանազիայի համալիրային մայրաքաղաք է համարվում: Այստեղ առավել անհանգստացնող է այն հանգամանքը, որ Շվեյցարիա ժամանած կամավորների մեծ մասը էվթանազիայի է ենթարկվում հենց առաջին օրը՝ առանց բժշկական համապատասխան եզրակացություն: Դրա հետևանքով կյանքից հեռանում են ոչ միայն անբուժելի հիվանդներ, այլև հոգեկան անհավասարակշիռ մարդիկ:

Հոգեբանության տեսանկյունից առաջ է քաշվում հիվանդի մտահոգվածության խնդիրը, որ չեն ցանկանում «բեռ» դառնալ իրենց հարազատների համար: Այս խնդիրն ի հայտ է գալիս հիմնականում երկու պատճառներով՝ ուշադրության և հոգատարության պակասի զգացում և ֆինանսական անկարողության գիտակցում: Էվթանազիայի կողմնակիցները նրա արդարացումը հիմնավորում են նաև անհատի ինքնանկախության սկզբունքի միջոցով: Անհատի ինքնանկախությունը բիոէթիկայի հիմնարար սկզբունքներից է: Դրա էությունը կայանում է նրանում, որ մարդն իրավունք ունի իմանալու իր ցանկացած հիվանդության մասին սպառիչ տեղեկատվություն և ինքն իրավունք ունի որոշում կայացնելու իր հետագա անելիքների մասին:

Կրոնական տեսանկյունով այս խնդիրն անդրադառնալիս բախվում ենք մարդու գոյության երկու սահմաններին՝ կյանքին ու մահվանը, որոնք բովանդակում են արարչագործության առեղծվածը և Քրիստոսի խաչի խորհուրդը: Այս երկուսի միջև տարածքը պատկանում է մարդու ազատությանը, բանականությանը, իր կամքին և գործունեությանը: Այդ ազատությունը չի խաթարվում նույնիսկ Աստծո կողմից: Բայց այդ սահմաններից այն կողմ գործում է Աստծո ազատությունը, և մարդը կոչված է հարգելու այն<sup>1</sup>:

Առաջին և կարևոր փաստարկներից մեկը, որ առաջարկում են էվթանազիայի հակառակորդները, ունի կրոնական-բարոյական հրահանգներ՝ «Մի՛ սպանաներ» և «...սիրեսցես՝ զընկեր քո իբրեւ զանձն քո»: Վերջիններս այն համոզմանն են, որ Աստված է կյանք շնորհողը, հետևապես միայն նա իրավունք ունի որոշելու, թե երբ պետք է մարդ լքի երկրային կյանքը: Այն հեշտ ընտրություն կարող է լինել թե՛ բժիշկների, թե՛ հիվանդի հարազատների համար: Այս առումով էվթանազիայի էթիկական թույլատրությունը մեծացնում է չարաշահումների վտանգը բժիշկների և հարազատների կողմից, որը մեծ չափով սրվում է անհույս հիվանդության ժամանակ: Բացի դրանից, կարևոր է, թե որքանով է մահն արագացնելու մասին հիվանդի որոշումը սեփական կամքի,

<sup>1</sup> Տե՛ս Юдин Б. Г., Тищенко П. Д. Биоэтика. М. 2005, էջ 404:

ազատ ընտրությունների արտահայտություն . չէ՞ որ նրա վճիռների վրա կարող են ազդել այնպիսի գործոններ, որոնք նույնիսկ չեն գիտակցվում նրա կողմից: Օրինակ, հիվանդը կարող է նման որոշում կայացնել համապատասխան սոցիալական պատճառներով և որ առավել կարևոր է, չունի կարեկցողներ և խնամողներ: Նման դեպքերը հիվանդի ազատ կամքի արտահայտություն չեն կարող լինել: Բարոյականությունը վերջին արգելքներից է, որ խոչընդոտում է ոտնձգությունը մարդկային կյանքի նկատմամբ: Էվթանազիայի ընդունման դեպքում այս արգելքն այլևս անգոր կլինի:

Նույն բովանդակությունն ունի նաև հաջորդ փաստարկը՝ ինքնամաքրում տանջանքի միջոցով և ծանր հիվանդ մարդկանց խնամքի միջոցով փրկվելու հույս: Այս տեսանկյունից տանջանքները կապվում են մեղքերից մաքրվելու հնարավորության հետ և բոլորովին անիմաստ չեն դառնում: Յուրաքանչյուր արարք իր վարձն ունի, հետևաբար տանջանքը կարող է ընկալվել որպես միակ հնարավորություն մեղքերի մաքրման համար:

Վատիկանի եկեղեցական ժողովում (1962-1965 թթ.) կաթոլիկ եկեղեցին դատապարտել է կյանքի հանդեպ գործված ոճիրները, ինչպես օրինակ՝ ցանկացած տեսակի սպանությունը, ցեղասպանությունը, արհեստական վիժեցումը, էվթանազիան կամ կամավոր ինքնասպանությունը: Կյանքը սուրբ է և Աստծո պարգև, որ մարդ կոչված է պահպանելու և պտղաբեր դարձնելու այն: Դավանաբանության կոնգրեգացիայի 1980 թ. «Էվթանազիայի մասին հռչակագիրը» միանշանակ հայտարարել է. «Անհրաժեշտ է ողջ հաստատակամությամբ ասել, որ ոչ ոք չի կարող թույլ տալ անմեղ մարդու սպանություն լինի այն սաղմ կամ պտուղ, երեխա կամ հասուն մարդ, անբուժելի կամ մահացող մարդ: Բացի դրանից, ոչ ոք չի կարող պահանջել կատարել այդպիսի սպանություն թե՛ իր, թե՛ որևէ մեկ այլ անձի նկատմամբ»<sup>1</sup>: «Թեթև մահ» հասկացությունը օգտագործվել է Դավանաբանության կոնգրեգացիայի 1980 թ. մայիսի 5-ին ընդունած «Հռչակագիր էվթանազիայի մասին» փաստաթղթում, որտեղ ձևակերպվել է էվթանազիայի սահմանումը. «Էվթանազիա ասելով հասկացվում է ցանկացած գործողություն կամ անգործություն, որն իր էությամբ կամ դիտավորությամբ հանգեցնում է մահվան: Այսինքն, իր ուղղակի նշանակությամբ էվթանազիան բժշկի օգնությամբ կանխամտածված սպանությունն է»: Այս ձևակերպման մեջ հստակ երևում է կաթոլիկ եկեղեցու դիրքորոշումը. այն որակում է որպես սպանություն:

<sup>1</sup> Pope John Paul II (1995) Evangelium Vitae, 25 March, www.vatican.va

Կաթոլիկ եկեղեցու 20-րդ դարավերջյան ամենահայտնի փաստաթղթերից մեկը Հովհաննես Պողոս Բ պապի 1995 թ. *Evangelium vitae*<sup>1</sup> («Կյանքի Ավետարան») կոնդակն է, որը հենվում է Սուրբ Գրքի, քրիստոնեական ավանդույթյան և բնական օրենքի վրա՝ պաշտպանելու համար այն հայտարարությունը, որ էվթանազիան Աստծո հաստատած կարգից հեռացում է, բարոյապես հավասարազոր ինքնասպանությունը կամ սպանությունը: Շրջաբերական այս ուղերձը վերահաստատում է մարդու կյանքի արժեքը և անձեռնմխելիությունը: Միայն այս արժեքները հիմք ունենալով՝ մարդը կգտնի արդարություն, խաղաղություն, ճշմարիտ ազատություն և երջանկություն:

Բողոքական եկեղեցու հավատացյալների մեծամասնությունը եթե հասկանում է, որ հիվանդի կյանքի համար անհիմաստ է պայքարել, որովհետև առողջանալու հույսեր չկան, որոշում են ընդհատել բուժումը<sup>2</sup>: Բողոքական եկեղեցում միանշանակ չէ էվթանազիայի նկատմամբ վերաբերմունքը: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ օրինակ Գերմանիայում Ավետարանական լյութերական եկեղեցին մշակել է մանրամասն ցուցումներ հիվանդի կյանքի վերջի վերաբերյալ, սակայն նրանք մերժում են էվթանազիան<sup>3</sup>: Մինչդեռ ռեֆորմատորական ավանդությունը, օրինակ Հոլանդիայում՝ պաշտպանում են ակտիվ էվթանազիան:

Ուղղափառ եկեղեցին մահը չի դիտում միայն որպես կենսաբանական գործընթաց, այլ այն ընկալում է իբրև միստերիա և աստվածային օրհնություն<sup>4</sup>: Ուղղափառ եկեղեցին գտնում է, որ իրական հավատացյալի միտքը չպետք է զբաղված լինի կյանքի և մահվան մասին որոշումներ կայացնելով, այլ պիտի մշտապես աղոթի իր և մերձավորների համար: Յուրաքանչյուր բժշկական միջամտություն, որ ուղղված չէ կյանքի երկարացմանը, ուղղափառ եկեղեցիները դիտարկում են որպես ոչ բարոյական և ոչ էթիկական: Հունական ուղղափառ եկեղեցու բիոէթիկայի հանձնախումբը գտնում է. «Միշտ գոյություն ունի սխալ ախտորոշման վարկած, կամ հիվանդության անկանխատեսելի ելք կամ նույնիսկ հրաշք»<sup>5</sup>: Այս ամենի պատճառով չի թույլատրում ո՛չ հետաձգել բուժումը, ո՛չ հրաժարվել դրանից, անգամ եթե հիվանդն է դա պահանջում: Բժիշկը պիտի կարողանա համոզել հիվանդին շարունակելու այն:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Pauls M, Hutchinson RC (2002) Bioethics for clinicians: Protestant bioethics. *Can Med Assoc J* 166:339-344.

<sup>3</sup> May AT (2003) Physician assisted suicide, euthanasia, and Christian bioethics: moral controversy in Germany. *Christ Bioeth* 9:273-283 c.

<sup>4</sup> Hatzinikolaou N (2003) Prolonging life or hindering death? An orthodox perspective on death, dying and euthanasia. *Christ Bioeth* 9:187-201.

<sup>5</sup> The Holy Synod of the Church of Greece, Bioethics Committee (2000) Press release, 17 August. Basic positions on the ethics of transplantation and euthanasia. [www.bioethics.org.gr](http://www.bioethics.org.gr).

Ռուս ուղղափառ եկեղեցին սահմանում է էվթանազիան, որպես ինքնասպանություն և սպանություն: Այն հանդիսանում է ինքնասպանության ծայրահեղ աստիճան, որը հեռու է տանում Աստծուց և ճշմարիտ ուղուց: Մարդիկ ու վրեր հակված են դրա օրինականացման՝ մեծ մեղք են գործում Աստծու դեմ: Աստված անսահման սիրում է մարդուն, արդյոք այն մարդիկ, ովքեր նախանամության անվան տակ անում են դա չե՞ն փորձում միջամտել Աստծու գործերին: Էվթանազիա նախաձեռնողները հանդես են գալիս Աստծուն հակառակ և փաստացի հանդիսանում են անհավատներ: Նրանք էվթանազիան համարում են թաքնված կամ բաց սատանիզմ: Հոգու տարանջատումը մարմնից, ինչպես նաև մարդու ծնունդը պատկանում է միայն Աստծուն, միայն նա է հանդիսանում հարության, կյանքի և հանգստի աղբյուրը: Եկեղեցին էվթանազիան չի թույլատրում, քանի որ այն չունի ուղղում և ապաշխարություն: Էվթանազիայի վերաբերյալ Ռուս ուղղափառ եկեղեցու առաջին պաշտոնական փաստաթուղթը «Էվթանազիայի օրինականացման ժամանակակից միտումներ» կոչված փաստաթուղթն է (1999 թ.), ուր ասվում է. «Ճանաչելով յուրաքանչյուր մարդու կյանքի արժեքը, նրա ազատությունը և արժանապատվությունը որպես եզակի արարածի՝ ստեղծված Աստծո պատկերով և նմանությամբ, ուղղափառ հոգևորականությունը, բժիշկները, գիտնականները կարծում են, որ անընդունելի է անհույս հիվանդ մարդկանց սպանելու մտադրությամբ էվթանազիայի օրինականացման ցանկացած փորձ՝ այն համարելով սպանության մի ուրույն ձև: Ռուս ուղղափառ եկեղեցու Եկեղեցական խորհուրդը դեմ է էվթանազիայի ցանկացած ձևի, քանի որ, դրա ընդունումը տանում է առողջապահական համակարգի նկատմամբ անվստահությունը:

Իսլամական բիոէթիկան հանդիսանում է Շարիաթի շարունակությունը՝ հենված Ղուրանի և Սուննաների վրա<sup>1</sup>:

Նկատենք, որ իսլամական շատ երկրներում (ինչպիսին օրինակ Իրանում է) օրենքները և կանոնները, որոնք վերաբերում են էվթանազիային, հիմնվում են մահմեդական հայացքների վրա: Ծագումով մահմեդական շատ գիտնականներ այդ խնդրի պատասխանները փնտրում են իսլամական իրավագիտության մեջ: Առաջին հիմնական և կարևոր աղբյուրը համարվում է Ղուրանը, որը մուսուլմանական համայնքում գտնվում է ամենաառանցքային տեղում: Երկրորդը՝ կրոնական կարծիքները և դեկրետներն են՝ տրված իսլամական գիտնականների կողմից, որոնք կոչվում են «Մոֆթի ալ-Ազամ» (Սունիների մոտ) և «Այաթոլլահ ալ-Օզամ» (Շիաների մոտ): Իսկ երրորդը՝ իսլամական էթիկայի բժշ-

<sup>1</sup> Islamic bioethics. Can Med Assoc J 164:60-63.

կական կողեքսներն են, որոնք մուսուլմանական փորձագետների և գիտնականների քննարկումների և համաձայնությունների արդյունք են:

Այժմ դիտարկենք Ղուրանում առկա մի քանի գրվածքներ, որոնք կօգնեն հասկանալ թե ինչ դիրքորոշում ունի իսլամի սուրբ գիրքը էվթանագիայի հանդեպ: Նախ, առաջինը. «Մի՛ վերցրու կյանքը, որը Ալլահը սուրբ է դարձրել» (Ղուրան 17:33), « Եթե ինչ-որ մեկը սպանություն է գործում, նա սպանություն կամ չարիք է տարածում երկրի վրա, դա կլինի այնպես, ասես նա սպանել է ամբողջ մարդկությունը» (Ղուրան 5:32):

1981 թ. Քուվեյթում հրավիրված իսլամական բժշկության միջազգային առաջին համաժողովի ժամանակ լույս ընծայված բժշկական էթիկայի մահմեդական կողեքսում նշվում է, որ յուրաքանչյուր անհատի կյանքի ավարտման ժամանակ բժիշկները պետք է իմանան իրենց հատուցած ծառայության սահմանը և չարհամարհեն այն: Այնուամենայնիվ, բժիշկը պետք է ամեն կերպ փորձի կանխի մահը և նպաստի պահպանմանը, այլ ոչ թե հակառակը՝ բացասական դիրք ընդունի և դադարեցնի այն: Բժշկական էթիկայի իսլամական կողեքսներում կա մի հոդված, որը վերաբերում է էվթանագիային և ֆիզիկական միջատությունը մահվանը: Այդ կողեքսի 61-րդ հոդվածում ասվում է, որ մարդկային կյանքը սուրբ է և այն չպետք է զուր տեղը ընդհատվի: Այդ իսկ պատճառով էլ բժիշկը չպետք է կասեցնի հիվանդի կյանքը՝ անկախ նրանից, թե այն հիվանդի խնամակալի խնդրանքն է, թե նույնիսկ սաստիկ ցավեր կամ անբուժելի հիվանդություններ ունեցողի խնդրանքը:

Իսլամական արդարադատությունը, որը հիմնվում է Ղուրանի համոզիչ մեկնաբանության վրա, չի ճանաչում կամավոր մահանալու մարդկային իրավունքը: Էվթանագիայի վերաբերյալ իսլամական արդարադատության այս իրավական փաստարկը հիմնվում է երկու կարևոր կետերի վրա, որոնք առկա են Ղուրանում. առաջին՝ որ կյանքը սուրբ է, և ցանկացած պատճառ չի կարող ստիպել, որ մարդուն իր իսկ կյանքից զրկեն և երկրորդը՝ Ալլահը միայն գիտի թե, որքան պետք է մարդն ապրի և ոչ ոք չի կարող միջամտել նրա գործերին: Այդ հարցում իսլամական բոլոր գիտնականները համակարծիք են և կտրականապես դեմ են էվթանագիային:

Այսպիսով, ընդհանրացնելով կարող ենք ասել, որ առհասարակ մահմեդական աշխարհում էվթանագիան չի կարող գործածվել շատ պարզ պատճառով, որ այնտեղ օրենքը հիմնվում է Ղուրանի վրա և դրանից զատ նրանց համար ընդունելի այլ բան չկա:

Չնայած հինդուիստների և սիկիսների տարբերությունը, նրանք ամեն դեպքում հավատում են «կարմային» և նրանց բոլոր մտքերն և գործողությունները



ունենում են հետևանքներ, ուստի լավ «կարմայի» դեպքում մարդը լավ վերածնունդ է ունենում, իսկ վատի դեպքում, բնականաբար՝ վատ<sup>1</sup>: Մահը դա վերածննդի ճանապարհն է, իսկ անժամանակ վախճանը, ըստ նրանց, դա մեծ դժբախտություն է<sup>2</sup>: Էվթանազիան Հնդկաստանում անօրինական է եղել դեռևս անգլիական քրեական օրենսգրքի (1860 թ.) կիրառության ժամանակվանից<sup>3</sup>, սակայն հասարակության մեջ կա ավանդույթ ինքնասպանության կատարել որոշակի խիստ պայմաններում: Ի նկատի ունեն ինքնասպանության այն տարբերակը, երբ անբուժելի հիվանդ մարդը մահը համարում է իր համար մաքրագործման մի եղանակ, և այն իրականացնելիս պիտի նախապես կանխամտածի և դրա կատարման ժամանակ թույլ չտա այնպիսի սխալներ, որ հանգեցնի «վատ մահվան» (մահանալիս արտաթորել, սրտխառնել կամ միզել)<sup>4</sup>:

Ինչպես հինդուիզմի, այնպես էլ բուդդայականության պարագայում պաշտոնական դիրքորոշում չկա բիոէթիկայի մի շարք խնդիրների վերաբերյալ: Հիմնականում բուդդայականությունը հենվում է այն երկրի մշակույթի վրա, որտեղ այն ընդունված է: Այդ պատճառով կյանքի և մահվան մասին ուսմունքները իրարից տարբերվում են Հնդկաստանի, Տիբեթի, Թաիլանդի, Ճապոնիայի և Արևմուտքի բնակչության մոտ: Սակայն որոշ ասպեկտներ, այնուամենայնիվ, նույնն են բոլոր բուդդայականների մոտ: Ընդհանրապես բուդդայականները բարոյական պահանջ և պարտավորություն չունեն պահպանելու կյանքն ամեն գնով: Նրանք կարևորում են այն հանգամանքը, որ մահը պիտի դիմավորել պարզ մտքով: Այդ պատճառով նրանցից շատերը չեն ընդունում ցավազրկում մահացու հիվանդությունների ժամանակ: Էվթանազիան կամ սպանությունը բարեգթությունից ելնելով՝ չեն ընդունում<sup>5</sup>:

Հայ առաքելական եկեղեցին չի ընդունում էվթանազիայի որևէ դրսևորում, լինի դա պասիվ, թե ակտիվ, քանի որ կյանքը սուրբ է: Հայոց եկեղեցու ականավոր ներկայացուցիչները դարեր շարունակ ժխտողական վերաբերմունք են ունեցել ինքնասպանության վերաբերյալ: Հայ հոգևոր սպասավորները քանիցս դատապարտում են այդ երևույթը, սակայն դեռ պաշտոնական տեսակետը կենսաէթիկայի աստվածաբանության խնդիրների շուրջ չեն հրապարակվել: Այժմ եկեղեցում մշակվում է այդպիսի խնդիրների վերաբերյալ հայեցակարգ, որը պաշտոնապես կհրապարակվի առաջիկա եկեղեցական ժողովի ժամանակ:

<sup>1</sup> Coward H, Sidhu T (2000) Bioethics for clinicians: Hinduism and Sikhism. Can Med Assoc J 163:1167-1170, Firth S (2005) End-of-life: a Hindu view. Lancet 366:682-686

<sup>2</sup> Desai PN (1988) Medical ethics in India. J Med Phil 13:231-255

<sup>3</sup> Mani RK (2006) End-of-life care in India. Intensive Care Med 32:1066-1068

<sup>4</sup> Firth S (2005) End-of-life: a Hindu view. Lancet 366:682-686

<sup>5</sup> Ratanakul P (1988) Bioethics in Thailand: the struggle for Buddhist solutions. J Med Philos 13:301-312.

«Այստեղ, ահա, թող հիշենք նաև մեր վերջին և քաջ հիվանդ ներկայացուցիչները՝ երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսները, քաջանուն հիվանդներ, քաղցկեղով մահացած, բայց և ոչ մեկ ժամանակ կյանք և մահ աստվածադիր օրենքից շեղված անուններ: Նրանք ոչ մի տրտունջ չցուցաբերեցին, այլ ընդհակառակը ամեն մի ցավ և վիշտ տարան անմռունչ, ասել է աներեր հավատքով և բարեպաշտի կեցվածքով: Այո, նրանք քաջ գիտեին, որ մարդկային կյանքը կյանք է նաև այս ցավատանջ ձևի մեջ, և չէր կարելի կյանքը պղծել ոչ մեկ ձևով: Կյանքի տվողն ու առնողը միայն Աստված է, և չի կարելի որևէ մեկին էլ թույլատրված չէ իր կոշիկից վեր բարձրանալը: Այո, նրանք ծանոթ էին էվթանագիային, թե՛ ոչ, սակայն դարձյալ անմռունչ և այս ձևի կյանքով լուռ ասացին, որ մի այլ ձևի կյանքը սպանություն է՝ Աստուծո և մարդկության դեմ»<sup>1</sup>:

Էվթանագիայի հիմնախնդիրը սերտորեն կապված է մարդու կյանքի իրավունքի հետ: Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էվթանագիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցներով: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էվթանագիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետությունում ինքնասպանությունը պատասխանատվություն չառաջացնող արարք է: Ինքնասպանությունն այլ անձի միջոցով իրականացնելը վերջինիս համար առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված կարգով՝ որպես մեկ ուրիշին ապօրինաբար կյանքից զրկել՝ հասարակ սպանություն (հ. 104): Էվթանագիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցներով արգելված է. այն անձինք, ովքեր գիտակցաբար իրականացնում են էվթանագիա, կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պասիվ էվթանագիան ներկայումս թույլատրվում է ավելի քան քառասուն երկրներում: Ակտիվ էվթանագիան օրենսդրորեն թույլատրվում է, օրինակ, Հոլանդիայում 2000 թ. և Բելգիայում 2002 թ., որով քրեական պատասխանատվությունից ազատվում են այն բժիշկները, որոնք օգնում են անհույս, ծանր, անբուժելի հիվանդներին հեռանալ կյանքից «հիվանդը պետք է կրի անտանելի ցավեր, որոնք հնարավոր չէ մեղմել, նա պետք է անձամբ, ինքնակամ խնդրի

<sup>1</sup> Ն. Եպս. Շաքարյան, «Էվթանագիա», Տարեգիրք 2, Աստվածաբանության ֆակ., 2011, էջ 89:

բժշկին օգնելու իրեն մահանալ, իսկ վերջինս իր հերթին պարտավոր է խորհրդակցել նաև մեկ այլ անկախ մասնագետի հետ, յուրաքանչյուր նման դեպքում պետք է հաղորդի իշխանություններին՝ ոչ բնական մահվան մասին»։ Այսպիսով, այս երկրներում քրեական պատասխանատվությունը վրա է հասնում միայն օրենքով սահմանված էվթանագիայի կանոնների խախտման համար։ Ակտիվ էվթանագիան օրինականացրել է նաև ԱՄՆ-ի Օրեգոն նահանգը, որտեղ այն թույլատրվում է իրականացնել մահացու հիվանդների նկատմամբ, որոնք գտնվում են հիվանդության վերջին փուլում։ Երկրների մեծ մասում ակտիվ էվթանագիան արգելված է քրեական պատասխանատվության ենթարկելու ուժով։

Տարբեր երկրներում այս երևույթի նկատմամբ առկա իրավաբանական հակասական գնահատականը պայմանավորված է բժշկական, բարոյաէթիկական, փիլիսոփայական, կրոնական հայացքների առանձնահատկություններով և պատմական փորձով<sup>1</sup>։

Ակտիվ էվթանագիան անհամատեղելի է «Հիպոկրատի երդման» հետ, որտեղ կա այսպիսի պարտավորություն. «Ես ոչ մեկին չեմ տա այն մահացու միջոցը, որը նա խնդրում է ինձնից և ցույց չեմ տա այնպիսի միջոցներ, որոնց օգնությամբ նա կարող է իրագործել մեռնելու իր մտադրությունը»<sup>2</sup>։

Ելնելով էվթանագիայի հանդեպ առկա ոչ միանշանակ հասարակական վերաբերմունքից՝ մի շարք երկրներում օրենսդիրը տուժողի խնդրանքով սպանությունը համարում է քրեորեն պատժելի, բայց միևնույն ժամանակ դիտում է որպես մեղմացնող հանգամանք։ Օրենսդրի այս մոտեցումն արտահայտվում է հետևյալ եղանակներով քննարկվող արարքը ամրագրել մեղմացուցիչ հանգամանքներով հանցակազմով կամ օրենսդրորեն ամրագրել կարեկցանքի կամ նմանատիպ շարժառիթներով արարքի կատարումը որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք։ Շատ երկրներում օրենսդիրն այս խնդրի վերաբերյալ ընդհանրապես իր վերաբերմունքը չի արտահայտել՝ հարցի լուծումը թողնելով դատական պրակտիկային։

Ներկայումս կարեկցանքի շարժառիթով տուժողի սպանությանը նվիրված հատուկ հոգվածներ կամ առանձին նորմեր ունեն շուրջ երեսուն երկրների

<sup>1</sup> Լ. Գրիգորյան, Քրեական պատասխանատվությունը էվթանագիայի համար, «Բանբեր երևանի համալսարանի», N 1, 2014, էջ 54:

<sup>2</sup> Հիպոկրատի երդումը պատմականորեն ընդունված բարոյական և դեոնտոլոգիական սկզբունքների ամբողջություն է, որով երկվում են բոլոր բժիշկները բժշկական գործունեություն սկսելուց առաջ։ Փաստացի տվյալների համաձայն՝ տեքստի հեղինակը բժշկագիտության հայր Հիպոկրատն է կամ նրա աշակերտներից մեկը։

քրեական օրենսգրքեր<sup>1</sup>: Այն երկրներում, որտեղ բացակայում է կարեկցանքի շարժառիթով սպանություն հանցակազմը, այն համարվում է պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք: Այդպես է նաև ՀՀ-ում<sup>2</sup>:

Բժշկության և բարոյագիտության առնչություններին վերաբերող մտքերի հանդիպում ենք միջնադարյան հայ փիլիսոփաների, բժիշկների աշխատություններում, մասնավորապես, մեծ մտածող Դավիթ Անհաղթի գործերում, որի ծննդյան 1500 ամյակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մեծ շուքով նշվեց Սալոնիկում և Երևանում 1980 թ.<sup>3</sup>: Նա «Սահմանք իմաստության գրքի Թ՝ գլխում, շարունակելով Ներսես Մեծի և այլոց մտքերը, հարց է տալիս՝ արդյոք իրավունք ունի կամ կարող է բժիշկը թույլ տալ ինքնասպանություն գործել անբուժելի հիվանդին և պատասխանում է՝ ոչ, որովհետև, «ինչպես լավ նավապետը փորձվում է ոչ թե խաղաղ ծովում, այլ ալեկոծության ժամանակ, նույնպես և խիզախ հոգին փորձությանն ընդառաջ է գնում»<sup>4</sup>:

Դավիթ Անհաղթի այս մտքերը բխում են փիլիսոփայական նույն դիրքերից, որոնք արտահայտվել են Հիպոկրատի հանրահայտ երգման մեջ, որտեղ ի թիվս այլ արգելքների, բժիշկը երգվում է. «Խոստանում եմ չնայելով խնդրանքի, ոչ ոքի չտալ մահացու դեղ»:

Իսկ այն բժիշկը, որ ելնելով այս կամ այն դրդապատճառից, այնուամենայնիվ, դրժում է իր երգումը և թույն տալիս հիվանդին, ենթարկվում է ոչ միայն բժշկության աստվածների և մարդկանց անեծքին, այլև վարչական պատժի, ընդհուպ մահապատիժ: Այդ մասին կարգում ենք V դարի հայ պատմիչ, քերթողահայր Մովսես Խորենացու «Գիրք պիտոյից» աշխատության մեջ<sup>5</sup>:

Հայտնի է, որ ստոիկյան փիլիսոփայության հետևորդներն ինքնասպանությունը արդարացնում էին ինը դեպքում՝ սով, բոլոր մերձավորների կորուստ, տարերային աղետ, մարդկային արժանապատվության ոտնահարում, անբուժելի հիվանդություն, զառամախտ և այլն:

Ինչպես նշում է Ս. Ա. Վարդանյանը իր աշխատության մեջ, վերջին երկու դեպքն ուղղակի կապ ունեն բժշկության հետ: Այսպես օրինակ, ստոիկներն ասում էին. «Արդ, ճիշտ է վարվում նաև նա, որ սպանում է ինքն իրեն, եթե նրա մարմինը ենթարկվել է ինչ-որ չար հիվանդության և փչացման, այդ անբուժելի

<sup>1</sup> Տե՛ս Додонов В. Н., Капинус О. С., Щерба С. П., Сравнительное уголовное право. Особенная часть. М., 2010, էջ 50:

<sup>2</sup> Լ. Գրիգորյան, Քրեական պատասխանատվությունը էվթանազիայի համար, «Բանբեր Երևանի համալսարանի», N 1, 2014, էջ 56:

<sup>3</sup> Դավթյան Ս. Հ., «Բիոէթիկայի ներածություն», Եր., հեղ հրատ., 2012, էջ 213:

<sup>4</sup> Վարդանյան Ս. Ա., Հայաստանի բժշկության պատմություն, Երևան, 2000, էջ 35:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

ցավից ազատվելու համար»: Այսպես օրինակ, մի ոմն կինկիյան (ցինիկ) փիլիսոփա, որը կիսով չափ անդամալուծված էր, դիմեց Հուլիանոս կայսերը, ասելով: «Մարմնիս կեսը մեռավ իսկ մյուս կեսը դեռ ապրում է: Գլխիս, ով թագավոր, կիսված կինկիյանիս, հրամայիր բժշկել կամ սպանել: Այդպես էլ ճիշտ է վարվում նա, ով խորին ծերություն հասնելով, վերջ է տալիս իրեն, երբ արդեն սկսում է զառանցել աղճատել ու անկապ բաներ ասել»:

Եթե ստոիկների պատասխանը էվթանագիային «այո» էր, ապա հայ միջնադարյան փիլիսոփաներից, բժշկապետներից և այլոց աշխատությունում երբևիցե չի խրախուսվում այդ միտքը: Օրինակ Դավիթ Անհաղթը, մերժելով ինքնասպանությունը, ասում է. «Իսկ փորձությունները, որտեղ էլ դրանք պատահեն, գոյություն ունեն ոչ թե նրա համար, որ վերջ տան իրեն, այլ որպեսզի փորձեն մարդու ոգին»<sup>1</sup>:

Հատկանշական է, որ միջնադարյան հայ օրենսդրական մտքի ռահվիրաներ Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքերի» 119 և 154 հոդվածների համաձայն միտումով և կամ տգիտության պատճառով հիվանդի առողջությունը վնասող բժիշկները, նաև իրենց աշակերտներին պատշաճ գիտելիքներ չտվող բժիշկները, պատժապարտ էին: Սա խոսում է միջնադարյան Հայաստանի կրթական օջախների նկատմամբ ցուցաբերվող բարձր պահանջ-կոտություն մասին:

Այսպիսով ակնհայտ է բժշկի պատասխանատվության խոր գիտակցումը հայկական օրենսդրության մեջ, որ միաժամանակ վկայում է թե երկրի բժշկանոցների և թե ուսուցման մասնագիտական բարձր մակարդակի մասին:

Աշխարհիկ ընկալման մեջ տառապանքն ու ցավերը մի միայն բացասական երանգ են ստացել սակայն քրիստոնեական պատկերացմամբ դրանք ազնվացնող ազդեցություն են ունենում մարդու հոգու վրա և փաստում են Աստծուն հետևելու մեր պատրաստակամությունը: Ընդամին նշվում է նաև հասարակության մեղավորությունը կյանքի և մահվան սահմանային իրավիճակներում. արդյոք մահամերձը ստանո՞ւմ է անհրաժեշտ բժշկական ամբողջումը, գուցե կանայք էվթանագիայի են դիմում այն պատճառով, որ հասարակության կողմից նրանց պարտադրված է խնամողի դերը, և նրանք չեն ուզում հայտնվել «բեռի» վիճակում<sup>2</sup>: Քրիստոնեական աշխարհընկալումը հիվանդախնամությունը մի նոր իմաստ է հաղորդում, որն արտացոլում է սերը մերձավորի նկատմամբ և աստվածային պատվիրանների կատարումը: Քրիստոնյա բարոյագետները պնդում

<sup>1</sup> Դավթյան Ս. Հ., նշվ. աշխ. էջ 214:

<sup>2</sup> Կենսաէթիկայի հիմնահարցեր, կազմ. Հ. սրկ. Սարգսյան, Վ. սրկ. Ասլանյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2013, էջ 57:

*են, որ հիվանդի՝ մահանալու ցանկությունը մահվան պահին լքված լինելու վախի դրսևորումն է: Այսպիսով, դատապարտման ենթակա է կյանքի իրավունքի ցանկացած ոտնահարում:*

### **ԷՎԹԱՆԱԶԻԱՆ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ**

*Լիլիթ Պողոսյան*

*Բանալի բառեր՝ էվթանազիա, սպանություն, մահ, պատիժ, ծանր հիվանդություն, բիոէթիկա, կարեկցանքի շարժառիթ, կյանք, կրոն, եկեղեցի, քրեական պատասխանատվություն:*

Հոդվածում ներկայացված է էվթանազիա երևույթը որպես սոցիալ-կրոնական երևույթ և տրված են մի շարք կրոնների և կրոնափիլիսոփայական ուղղությունների դիրքորոշումները այդ խնդրի վերաբերյալ: Համաշխարհային կրոնները պատասխանում են ժամանակակից մարտահրավերներին՝ իրենց իսկ գաղափարախոսության հիմնադրույթներից ելնելով: Էվթանազիայի հարցում կրոնները միշտ չէ, որ միակարծիք են: Չնայած ակտիվ էվթանազիան դիտարկվում է որպես անընդունելի երևույթ, այնուհանդերձ երբեմն գտնվում են տարբեր կրոնների ներկայացուցիչներ, որոնք փորձում են բերել հնարավոր հիմնավորումներ այն իրականացնելու կամ հիմնավորելու համար: Նրանք ելնում են այն հարցից, թե՞ որն է համարվում մահը: Բժշկությունը անընդհատ «մահվան սահմանը» այս ու այն կողմ է տանում՝ մշակելով նոր մեթոդներ հիվանդներին վերակենդանացնելու համար: Չնայած այս ամենին էվթանազիայի կիրառումը միշտ կլինի անընդունելի, քանի դեռ հավատացյալները հավատում են հոգու անմահությանը և անդրշիրիմյան կյանքին:

### **ЭВТАНАЗИЯ КАК СОЦИАЛЬНО-РЕЛИГИОЗНЫЙ ФЕНОМЕН.**

*Лилит Погосян*

*Ключевые слова: эвтаназия, убийство, смерть, наказание, тяжело больной, врач, мотив сочувствия, уголовная ответственность, жизнь, религия, церковь.*

Традиционные религии отвечают на вызовы и угрозы современного мира в зависимости от вероучительных основ и по отношению к эвтаназии не проявляют единодушия. Хотя активная эвтаназия рассматривается как неприемлемая большинством традиционных учений, в каждом из них находят представители, которые считают возможным сделать ряд оговорок. Убийство из милосердия - концепция атеистического сознания, однако искусственное продление жизни человека не всегда оправданно. Ответ на вопрос о допустимости эвтаназии зависит от того, что именно считать смертью. Медицина все время отодвигает "границу смерти", разрабатывая способы возвращения к жизни больных, которые еще несколько лет назад считались безнадежными. Вера в существование бессмертной души и загробный мир ставит

принципиальную возможность эвтаназии даже для тяжелобольного и испытывающего мучения человека под сомнение.

#### EUTHANASIA AS A SOCIAL-RELIGIOUS PHENOMENON

*Lilit Poghosyan*

**Keywords:** *euthanasia, murder, death, seriously ill, doctor, motive of sympathy, criminal liability, life, religion, church, mitigating circumstance.*

Death is one of the most important things that religions deal with. All faiths offer meaning and explanations for death and dying; all faiths try to find a place for death and dying within human experience. For those left behind when someone dies religions provide rituals to mark death, and ceremonies to remember those who have died. Religions provide understanding and comfort for those who are facing death. Religions regard understanding death and dying as vital to finding meaning in human life. Dying is often seen as an occasion for getting powerful spiritual insights as well as for preparing for whatever afterlife may be to come. So it's not surprising that all faiths have strong views on euthanasia.